

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և պ. Մատուրեանի խանութում

Օտարաբաղադրյալը գինում են ուղղակի

Тифлис. Редакция „Мшакъ“

Խմբագրատանը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ 1878 Թ.Կ

Ը ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԸՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօներին հետեւեալ օրերէն:

Լրագրի գիրքը և պրօգրամման նոյն են մնալու: Մենք կը ստանանք ՍԵՓԵՆԸՆ ԼԵՌԵԳԻՐՆԵՐ: «ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, կես տարվանը 6 ռուբլ: Գրվել կարելի է յՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ և պ. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ խանութում:

ԸՆԴՈՒՆՁԻՆ ՀԱՐԱՐՆԵՐԸ կը ծախվին 5 կոպէկով հատր: Օտար քաղաքներից պէտք է զիմել հետեւեալ հասցեով՝ ТИФ-ЛИСЪ Редакция „Мшакъ“.

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անգլիա և Հայաստան.— Եւրոպայի տեսու-թիւն, Նամակ Բագուից, Ներքին տուրք.— Արտաքին տեսութիւն: Անգլիա: Անգլիա-կան պարլամենտի մէջ առկա մի ծառ Հայաստանի մասին, Իտալիա, Ֆրանսիա.— «Մշակի» հեղափոխութիւնը.— Յայտարարութիւններ: Տեղեկացոյց.— Բանասիրական Հայոց գինուորական ծառայութեան հարցը համախոսեալ:

ԱՆԳԼԻԱ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆ

«Մշակի» մէջ ապկած երեկվայ հեռագիրը պարզ ցոյց է տալիս որ Մշակի վերջապէս սկսում է մտածել Հայաստանի և հայերի վրա: Երբեք անկեղծ են Մշակայի հայերի մասին հոգսերը,— չը գիտենք, բայց յոյս ունենանք որ անկեղծ են:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՈՑ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ ՀԱՐՑԸ ՏԱԶԱՍԱՆՈՒՄ

«Մշակի» № 6-ի բանասիրական բաժնում կարեալցիք մի յօդուած վերադարձաւ վերահայրին:

Պ. յօդուածագիրը եղբակցանում է թէ Տաճկաստանի հայերը սխալվել են, անխոհմարտ են վարվել չընդունելով զինուորագրութիւնը որը հարկաւոր է նոյն իսկ հայերի համար ներկայումս և որ իրանց անհրաժեշտ պարտաւորութիւնն է:

Պ. յօդուածագիրը իր փաստերը հաստատում է այն հիմքի վրա թէ հայերը իրեն քաղաքացի իրաւունքներ են վայելում Տաճկաստանում, թէ հայերի կրած հարստահարութիւնները մասնաւորաբար ձեռքով եղած զեղծումներ են, իսկ թուրք տէրութիւնը ՄԻՇՏ պահպանել է հայերին և իրանց շատ բարեբան է արել. հետեւապէս հայերը պարտաւոր են այդ բարեբանի փոխարէն իրանց արիւնք թափել թուրքերի պաշտպանութեան համար:

Այդ հեռագիրն նայելով անգլիական զեսպանը Կ. Պօլսում գրում է հայերին պահանջել թուրքիայից Հայաստանի ինքնավարութիւնը և խոստանում է որ Մշակի պաշտպան կը հանդիսանայ այդ երկրի շահերի լինելու կօնֆերէնցիայում:

Մինչև այժմ եւրոպական բոլոր մեծ պետութիւններից Ռուսաստանը միակ էր որ հոգում էր թէ խօսքով և թէ գործով թուրքիա-հպատակ քրիստոնեաների թշուառ դրութեան վրա: Այժմ այդ թշուառների վրա սկսում է մտածել և հոգալ, բացի Ռուսաստանից, դարձեալ եւրոպական մի մեծ պետութիւն, Մշակի: Այդ

Բայց արդէն պարունին դրած այդ հիմքը հաստատուն չէ և հետեւապէս նրա վրա կանգնեցրած բոլոր փաստերն էլ անհաստատ:

Հարցնում ենք պարունին. հայոց ազգը որ հինգ հարիւր տարուց առաջ, իր կրկնական թագաւորութիւնը մասնատարանների ձեռքով կործանված ժամանակ, բազմաթիւ միլիոններով էին հաշվում, ինչի ստիպվել է զաղթել աշխարհի ամեն կողմեր, ջարդվել, կոտորվել, կլանվել, այնպէս որ հազիւ երեք միլիոն հայ է մնացել այսօր թուրքիայում, մինչև որ հայոց ազգը վայելում էր թուրքերի պաշտպանութիւնը, բարեբանը, մեր պ. յօդուածագիրն նախանձելի եղով հովանի և քաղցր լուծը:

Պ. յօդուածագիրը ասում է թէ ոչ մի տէրութիւն այնքան յարգանք և արտօնութիւն չէ տալիս օտար կրօններին, որչափ Տաճկաստանը տալիս է քրիստոնեայ կրօններին, եկեղեցիներին, հոգեւորականներին:

Պատասխանում ենք. այո, ոչ մի տէրութիւն այնպէս չէ նախատել հայ հոգեւորականներին ինչպէս թուրքաց տէրութիւնը. ոչ մի տէրութիւն այնպէս չէ բանտարկել և սպանել հայ արքեպիսկոպոսների և պատրիարքների ինչպէս թուրքաց տէրութիւնը (կարգապէս Չամչեանի Հայոց պատմութեան մէջ Կ. Պօլսի հայոց պատրիարքութեան կոխները). ոչ մի տէրութիւն 19 դ. դարում Զատիկի առաւօտ Ս. պատրիարքի յետոյ եկեղեցու դռան առջև չը կանգնեց

պէտք է ուրախացնէ ամեն մտաւոր, զգացող, արդարութիւն սիրող մարդուն, մանաւանդ պէտք է ուրախացնէ հայերին, որոնք սովոր չեն, որ նրանց վրա նայելին որպէս մարդկային էակների վրա, որ նրանց վրա ցաւէին, նրանց մասին հոգային:

Բայց այդ դեռ բաւական չէ: Եւրոպական լրագիրները այս օրերս բերել են մեզ անգլիական պարլամենտի նստերից մինի հաշիւը, որից երևում է թէ Լոնդոնի լորդերը թէև փոքր ինչ ուշ իրանց արժանաւորութեանց ստոր չեն համարում պաշտպան հանդիսանալ քանդված, աւերված, անարգված, ոտնակոխ արած Հայաստանի....

Այժմ, օրինակ, պ. Հարկուրտի, անգլիական պարլամենտի անդամներից մինի հայերին և Հայաստանին վերաբերեալ նորերումն խօսեցած ճառի այն կտորը որ տպում ենք «Մշակի» ներկայ համարում, պարզ ցոյց է տալիս որ քան նշանակութիւն են տալիս անգլիացիները Հայաստանին և հայերին:

Հարկուրտ հարցնում է արդեօք հարկաւոր չէ որ Մշակիան իմանայ նոյն իսկ հայոց ազգի կարծիքը, առաջ քան սկսի պատե-րազմել Ռուսաստանի դէմ Հայաստանում թուրքաց կառավա-

մի քրիստոնեայ պատրիարքի, ինչպէս արաւ թուրք տէրութիւնը յոյների պատրիարքին. ոչ մի տէրութիւն հայոց ազգի վիճակաւոր առաջնորդ վարդապետին ոչ մի է չի ձուլ վրա դրած նախատիւնով չաքտեց և չը բանտարկեց բոլորովին անիրաւաբար, ինչպէս արաւ թուրք տէրութիւնը սրանից 4 տարու չափ առաջ Բալուրի առաջնորդ Սարգիս վարդապետին. ոչ մի տէրութիւն հայոց ազգի վիճակաւոր արքեպիսկոպոսին զօրքերով և զինուորներով չը ջապատած, անպատիւ կերպով չաքտեց, ինչպէս արաւ թուրք տէրութիւնը սրանից 5 տարու չափ առաջ Բրուսայի առաջնորդ Բարթոլոմէոս կաթողիկոսին անպատուելով և բռնի Կ. Պօլսի բերելով նրան, բոլորովին չը լսելով այդ բանի դէմ պատրիարքարանի արած սատիկ բողոքները: Ոչ մի տէրութիւն անպատիւ չը թողեց այնպիսի անձերին որոնք քրիստոնեայների եկեղեցիները և Ս. սեղանները ապականութիւններով ձեւիւն են, ինչպէս թուրքացած է նրանց թուրք տէրութիւնը Վանի մէջ և չը ջապատեց: Ոչ մի տէրութեան մէջ չէ պատահել որ հայ քահանայի գլխի շուրջ լակոտ դրած, Ս. սեղանին վրա հանեն և ստիպեն որ իրեն դառն Աստուծոյ դէմ նրան խորանին վրա պատարագ մատուցուած տեղը, ինչպէս պատահեցաւ այդ Մշակի մէջ և տէրութիւնը անպատիւ թողեց այդ սրբապիղծ մասնատականներին....

Հաստ երկար կը լինել եթէ այս տեղ շարէինք սրանց նման հազարաւոր բաներ որոնք ամեն օր

ուրթիւնը պահպանելու համար: Եւ նա շարունակում է ճառախօսել ապացուցանելով որ այն երեւոյթը որ ուռաաց զօրքը մի հայ գլխաւոր ունէր (և կարող էր աւելացնել և բազմաթիւ հայ գեներալներ) մեզ պէտք է համոզի, որ հայը ողբորված էր իր հայրենիքի թուրքաց լուծի տակից ազատելու գաղափարով:

Իսկ վերադառնալով երեկվայ հեռագրին և քննութեան տակ գցելով այդ հեռագրի երկրորդ մասը, որ հայոց ազգային ժողովը իբր թէ մերժել է անգլիական զեսպանի Լայարդի առաջարկութիւնը, այդ երեւոյթը մենք մեզ կարող ենք միայն նորանով բացատրել, որ հայոց ազգային ժողովում կայ մի պաշտօնական կուսակցութիւն, տէրութեան կուսակցից, չլու, հպատակ պաշտօնաններից բաղկացած մի խումբ....

Այդ խմբի մարդիկ երբեք իրանց չէին թոյլ տայ տէրութեան ցանկութիւններին դէմ դնալ և աւելի լաւ կը համարէին քնասել իրանց ազգին, ծախել իրանց ազգը, քան թէ տէրութեան դէմ հանդէս դուրս գալ, բողոքել նրա անիրաւութիւնների դէմ, կամ վերջապէս պահանջել նրանից իր ազգի համար մարդկային իրաւունքներ:

Երբեք ինչպէս կը վերաբերվի հայոց ազգային ժողովի մեծա-

պատահում են թուրքիայում մասնատականների ձեռքով և անպատիւ են մնում, Սրանք էլ արդէն հասկացողին համար բաւականին ցոյց են տալի թէ Տաճկաստանը որչափ յարգում է քրիստոնեայ կրօնին: Եւ գիտե՛ք, պ. յօդուածագիր, երբ են պատահել մեր վերա դրածները. ոչ թէ պատերազմի այլ խաղաղութեան ժամանակ, մինչև որ դոք գրում էք թէ «խաղաղութեան ժամանակ հայերը միշտ վայելել են տաճիկ տէրութեան հովանաւորութիւնը, տաճիկ ժողովրդի բարեկամական յարաբերութիւնները»): Ձեր այդ տողերից երևում է որ դուք չէք ուսումնասիրած թուրքիայի հայերի ոչ միայն այժմեան դրութիւնը այլ մօտաւոր անցեալն անգամ: Ուշագրութիւնով կարողացէք Առաքել պատմադիր և իմա էք թուրքիայի հայերի գոնէ մօտաւոր անցեալը:

Դուք ասում էք թէ Տաճկաստանի հայերի կրած հարստահարութիւնները ինքն թուրքաց տէրութիւնը սխտեմատիկաբար չէ պատրաստում հայերի համար և թէ նոյն իսկ Ռուսաստանում, իրենանի, չլմիսման կամ Բօքչալուի գաւառներում հայերին ինչպէս չեն անում քրիւդրել և Ղազախի և Չորաքանդաղ կոչված թուրքերը:

Ինչ հարկ կար, պարան, Ռուսաստանից օրինակ բերել. աւելի առաջ գնացէ՛ք. ամենից աւելի քաղաքակրթված երկրներում էլ, մինչև անգամ Ամերիկայում, զոլորթիւններ, սպանութիւններ կը լինեն. բայց դրանք իրանց ջոկ անունն ունեն. իսկ հարստահարութիւնը ջոկ

մասնութիւնը դէպի Լայպրիկ առաջարկութիւնը, — այդ չը գիտենք և կը տեսնենք զուցէ մի քանի օրից յետոյ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Լսելով «Մշակի» ամեն օր հրատարակելը չենք կարողանում մեր ուրախութիւնը չը յայտնել Պատիւ եւ համարում եւ բազմաթիւութիւն ինձ համար հորհուրդէլ զրա յառաջագործութիւնը, թէ և ամենք վառ են վերաբերում դէպի «Մշակի» առաջագործութիւնը նախանձից զրկված: Ի հարկէ այնպիսիք—պէտքէ խոտովանվենք— յաղթված ճշմարտութեան ծակոցից, անհեռա-տեսութեամբ իրանց հաճոյքին համեմատ սոր-րացնում են իրանց անձը: Այդպիսիների հա-մար միայն ցաւել կարող ենք:

Խոտովանվում եմ այդ քայլը որ գործեց «Մշակը» հերոսական է, առաջինն է այդպիսի ճանապարհի վրա: Այդպիսիների մէջ հարկեմե-րով կան այդպիսի լրագիրներ: Բայց այլ է մեր մէջ. մենք զեռ չենք զգում ծարաւ դէպի բն-թերցանութիւն, ուրեմն և պատրաստ չենք օգա-ցիւններով ընդունել այդ առաջին անգամ սկս-վող ամենօրեայ հրատարակութիւնը... Թողնենք այդ տխուր եղբակցութիւնները, այդ ստուց-նում է մեր արիւնը մեր երակներէ և սրտի մէջ. վերջապէս կը գայ այն օրը, երբ և մեր ազգը կը մտնի այն չըջանի մէջ, երբ մարդը ինչպէս չէ կարող անցկացնել օրը առանց ճաշելու, այնպէս էլ չէ կարող առանց ընթերցանութեան:

Պէտք է խոտովանվենք, որ «Մշակը» վեց ծանր տարիների ընթացքում ազգին մեծ ծա-ռայութիւններ է արել, իսկ այս վերջին վեցեր-րորդում ամենամեծը: «Մշակի» էր որ առաջին անգամ պարզ և ճշմարիտ փաստերով հրատա-րակեցիք ճանկատանի եղբայրակիցների դառն վիճակը, նրա արձագանքն էին թիֆլիսի ռուս լրագիրների մէջ տպող հայերի վերաբերալ յո-գուածները և այն տեղից Ռուսաստանի լրագի-րների մէջ: Եւ վերջապէս նա էր հիմնադրը մեր սրտերի մէջ գիտաբանութեան դէպի մեր անբախ-տացած եղբայրակիցները, այդ, նրա քարոզն էր որ երկրիս ծայրերից—ուր միայն կային զգացող հայասէր անձներ—իրանց լուսմանը հասցնում էին «Մշակի» խմբագրատունը օգնելու կարօ-տելոց, հարձեալ նրա շնորհն էր Կ. Պոլսի հայե-րին զգուշացնելու—թէ և նրանց համար միայն ձայն բարբառոյ յանապատիւ, —անտարբեր չը լինել դէպի ազգութիւնը, դէպի սահմանադրութիւնը, «Մշակի» դործն է մեր մէջ ընթերցանութիւն տարածելը: Մի այդպիսի օգուտակար լրագրի ա-ռաջագործութիւնը մի ուրախ երեւոյթ է և մենք

բան է և զրա վրայ է հարցը: Հարտահարու-թիւնը այն է որ իշխանութիւնը յատկապէս և սխտեմատիկաբար է գործում, ճշտում է, ինչպէս Տաճկաստանում, Ամերիկայում, Անգլիայում էլ, ամեն տեղ էլ ստիպել չարագործութիւններ կը պատահեն, բայց երբ չարագործները իշխանու-թեան առջև կը տարվին, դատաւորը ազգի և կրօնի խորութիւն չի անի: Բայց Տաճկաստա-նում երբ մի հայ մի քիչ խիտ խօսի մահմադա-կանին դէմ, կը բանտարկվի, կը պատմվի: Իսկ հայի կրօնին և պատմութիւն անարգող մահմադա-կանը երբեք չի պատժուի:

Եւ, պ. յօդուածագիր, թէ և չեմ ճանաչում ձեզ, բայց կերպում որ դուք Տիֆլիսից դուրս ելած և թիւրքիս տեսած չէք երբեք. այն աստիճան կատարելաւ ազիտութիւն է տեսնվում ձեր գրած-ների մէջ թիւրքիայի հայերի վերաբերութեամբ, Ուրիշ բան է եթէ գիտութեամբ և մեզ անյայտ մի նպատակով էք գրել այդպիսի ստու և սխալ տեղեկութիւններ: Բայց ինչ ալ լինի, եզուխտական է այն սկզբունքը թէ նպատակը արդարացնում է միջոցը:

Միթէ դուք չէք իմացել որ անցած տարի մի-ջև անգամ օսմանեան պարլամենտում երբ մի յոյն երեսփոխան բողոքեց հայերի կրած հարս-տաճարութիւններին դէմ, նպարտի հայ երեսփո-խանը յայտարարեց ժողովում թէ կարելի նահան-գապետը մի օր մտերմաբար ասել է իրան թէ իրանք չեն կարող այդ հարստաճարութիւնները

պէտք է հորհակալ լինենք խմբագրից, որ նա իր սեփական միջոցներով առաջ է տանում գրա-կանութիւնը:

Բայց բաւական չէ մեզ միայն խորախանալ ալ և հարկաւոր է օգնել. դա ամեն մի անհատի պարտաւորութիւն է:

Ցանկանում եմ «Մշակին» շատ բազուցիներով աջողութիւն և երկար կեանք այդ մեծ ասպարի-զում:

Ա. Չ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յունվարի 30-ի թիֆլիսի Գումայի նստի-մէջ կարգադրեցան ռուսահայաւանական հոգա-բարձութեան արած նկատողութիւնները Գումա-յից ներկայացրած թիֆլիսի Միջալէկեան արուես-տագործական ռուսահայաւան կանոնադրութեան մասին: Հոգաբարձութիւնը իր նկատողութիւն-ները թուում արաւ և այն նկատողութիւնը որ տեղական մայրենի լեզուով դատաւարութիւնը բո-լորովին աւելորդ է, որովհետեւ ամենքը այժմ գիտեն ռուսերէն: Ուսարական հոգաբարձութեան նկատողութիւնները քննելուց յետոյ հերքեց այդ բոլոր նկատողութիւնները, և Գումայի հաստա-տեց Ուսարական կարծիքը:

Թէ ԼԱՎԻՑ մեզ հաղորդում են, որ այնտեղից ուղևորվել են թիֆլիս իրանց առեւտրական գոր-ծերի համար մի քանի վաճառականներ, որոնց թէ Լավի գաւառապետը ճանապարհից յետ է դարձրել, ասելով որ թիֆլիս հիւանդութիւն կայ և վաճառականները կարող են ըրերել իրանց հետ տարափոխիկ հիւանդութիւն:

Խնդրում ենք մեր թէ թիֆլիսի և թէ գա-ւառների բաժանորդներից չուտով յայտնել, եթէ «Մշակի» մի որ և է համար նրանց չէ հասել, կամ այս և այն համար նրանք ուշ են ստացել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԳԼՈՒ

Լոնդոնում հրատարակվող «Whitehall Review» լրագրի մէջ մի յօդուած կար-դում ենք որ յայտնում է թէ անգլիական պարլամենտի մէջ կառաջարկվի փոքր գնել եզրագրութիւն վեհապետութիւնը սուլթանից և թէ դրա համար է որ պարլամենտը տարա-ժամ հրաւիրվել է խորհրդի:

«Whitehall Review» լրագիրը անգլիա-կան արիտօկրատ խմբի վեա տղեկութիւն ունենալով, որքան էլ քիչ հաւանական երե-ւար այդ առաջարկութիւնը, այնու ամենայ-

նախա պատճիւ, որովհետեւ Բ. Գումա երկու տեսակ հրահանգ է ուղարկում նահանգապետնե-րին, մին յայտնի որով պատուիրում է խոտի պատճիւ հարտահարող թուրքերին և քիւրդերին, իսկ մյուսը գաղտնի և նրան բողոքովին հակա-ռակ խմբաւով: Կարգադրեց Կ. Պոլսում հրատա-րակվող «Մասիս» լրագրի անցած տարու համար-ները ուր հրատարակված է այդ: Միթէ դուք չէք իմացել որ օսմանեան տէրութեան արտա-քին գործերի ամենանշանաւոր միջնորդներից մին վախճանած Ալի փաշան, երբ իրան առա-ջարկել էին մի քանի հազար զօրք ուղարկել Հայաստան քուրդերին զսպելու համար, պատա-խանել էր թէ ինչ էք ասում. նրանք մեր տե-րութեան անթույլ զօրքերն են. նրանց հար-կաւոր է պահպանել Հայաստանում քաղաքական նպատակներով:

Եւ այս ամենից յետոյ, պ. յօդուածագիր, դուք համարձակում էք ասել թէ ինքն տէրութիւնը սխտեմատիկաբար չէ պատաստում այն հարս-տաճարութիւնները, Գումա այնչափ անտեղեկ էք թիւրքիայի հակերի գրութեան որ կարծել էք թէ ամիր յաւաթիւն էլ քաղաքական պաշտօն է և հայերը տէրութեան հորհով միշտ հասած են այդ բարձր պաշտօնի: Երեկ թէ Խիսի հայերի պատ-մութիւնը կարգադրած ժամանակ, հազարադի ա-միրայները և ամիրայապետները պատուածու-նները լսելով, կարծել էք թէ այժմու ամիրայու-թիւնն էլ քաղաքական պաշտօն է որ թուրք տե-

նիւ մեծ արմուկ զցեց անգլիական մամուլը մէջ և պօղէմիկ պատճառ դառաւ:

Այդ հետաքրքրաշարժ յօդուածը արժան ենք համարում հաղորդել մեր ընթերցողնե-րին:

Ահա յօդուածը:

«Ինչի՞ համար պարլամենտը այսպէս սո-փորականից շատ աւելի կանուխ հրաւիրում է: Որովհետեւ նորին Վեհապետութեան թա-գուհու կառավարութիւնը ուղղում է երկրին մի առաջարկութիւն անել, որի համար փոքր է հարկաւոր և հետեւապէս պարլամենտի քուէն:

«Ինչ է այդ առաջարկութիւնը որ կառա-վարութիւնը պատրաստվել է անել: Աւելում են որ Անգլիան գնէ եզրագրութիւն վեա թիւր-քիայի ունեցած վեհապետական գերագոյն իշխանութիւնը (Suzeraineté):

«Այդ առաջարկութեան պայմանները և հարկաւոր եղած գրութիւնները վիճված, որոշված և ընդունված են սուլթանից և խաղվեց:

«Ինչ պատճառով ստիպված է Անգլիան այդ վեհապետական իշխանութիւնը գնել առաջարկելու Որովհետեւ Ռուսաց Կայսրի կա-ռավարութիւնը, բացի ուրիշ հաւանական կարգադրութիւններից, որոշել է նաեւ իրա իշ-խանութեան ներքոյ պահել այն ամեն տեղերը որոնց տիրել են ռուսական բանակները Նախ-յում, և թիւրք ստանալ ամբողջ Հայաստանը որի մէջ գտնվում են Կարա, Երզրում, Բա-թում և Տրապիզոն: Ուրեմն բացարձակ հար-կաւոր կը լինի Անգլիային գէնքի ուժով զինագրել այն ծրագրին որ Ռուսաստանը երկար ժամանակից ունեցել է իր երկրները Նախյում ընդարձակելու համար. մի ծրա-գիր, որ եթէ յաջող, կարող է Ռուսաստանը նրանով ամեն ժամանակ վտանգ սպառնալ Անգլիային Հնդկաստանի հետ ունեցած հա-ղորդակցութիւններին և արգելել նրան որ չը կարողանայ օգուտ քաղել այն երկրներից որոնցով կարելի է ռուսաց ծրագրի դէմ հա-կակշռող զօրութիւն կազմել:

«Ներկայումս վեհապետական իշխանութիւն գնել միջոց է այն տեսակ առաջարկութիւն-ներից է որոնց կարող է շուտով համաձայն-վել Անգլիան: Անտարակոյս Անգլիայի համար շատ է ժամն է նստում այս կերպով իր փողը տալ քան թէ իր զօրքերի կեանքը և իր գանձերը միանգամայն զոհել Ասիայում գէն-քով միջամտելով օսմանեան պետութիւնը պաշտպանելու համար: Բացի սրանից, նո-րին Վեհապետութեան Փաղուհու կառա-վարութիւնը ապահովված է որ այս նպա-տակի համար տրված փողը արդիւնաւոր

ութիւնը կը տալ. Գումա այս դէպքում նմանում էք այն եւրօպացիներին որոնք հայերին իրար պարօն անուանած ժամանակ կարծում են թէ զրանք զրաֆի նման բարձրաստիճան անձեր են, ինչպէս են պարսիկները Ֆրանսիայում:

Գումա ասում էք, պարսն, որ Տաճկաստա-նի տէրութիւնը տուեց հայերին 1860 թիւն Ազգային սահմանադրութիւն. բայց ով է մեղաւոր որ իրանք հայերը չը կարողացան կամ չը կամե-ցան օրինաւոր օգուտներ քաղել զրանից:

Այս մի ուրիշ մեծ սխալ ևս որ յայտնի ցոյց է տալի թէ դուք բողոքովին անտեղեկ էք թիւրքիայի գործերին: Տէրութիւնը հայերին սահ-մանադրութիւն չէ տուած և այդ սահմանադրու-թիւնը գուցէ դուք կարծում էք որ constitution-ի նման բան է որով տէրութիւնը հայերին քաղա-քական նոր իրաւունքներ տուած լինի որոնցից մեծ մեծ օգուտներ պէտք է քաղելին հայերը: Գա մի կանոնադրութիւն (re'glement, statut) է որ առաջնորդում է ժողովներին թէ ինչպէս պէտք է վարվեն, ինչպէս անեն իրանց նիստերը և այլն: Սահմանադրութեան մէջ միայն մի նոր իրաւունք տրված է ժողովուրդին, այն է քուէով (ձայների բազմութիւնով) ընտրել իր պաշտո-նեաները, մինչդեռ սահմանադրութիւնից յետաջ հարուստները աղքատ ինքնընտրի պաշտօնեա-ններն էին: Կարգացէք սահմանադրութիւնը եթէ զեռ չէք կարգացել, և տեղեկացէք:

Տէրութիւնը չէ տուած հայերին սահմանադ-

կերպով և շահաւոր պայմաններով գործա-ծված կը լինի, որովհետեւ երբ անգլիացիները կառավարեն եզրագրութիւն, նրա եկամուտը վճա-րված փողին բերելու տոկոսներից շատ աւե-լի կը լինի: Անգլիան եզրագրութիւն արած փո-խաւորութիւնների համար երաշխաւոր լինե-լով, կարող է շատ պահանջնել այն տոկոսը որ այժմուս վճարում է իրա ունեցած պարտ-քերի համար:

«Ինչ իմաստուն խորհուրդներով և ինչ համոզելէ փաստերով ստիպվել են մինիստր-ները մի այսպիսի առաջարկութիւն անել: Նորին Վեհապետութեան խորհուրդներով և համոզմունքով եղած է այդ, թագուհին իր մինիստրներին, իր խորհրդականներին մի զբոլթիւն ուղարկեց, որի վեա վիճեցին նրանք կաբինէտի վերջին ժողովում. մի գրու-թիւն որով յայտնում է թագուհին իրա կար-ծիքը այժմեան զրութեան վեա և իրա հա-մուտը թէ ժամանակ է որ Անգլիան գործէ Ռուսաստանի ծրագիրները հակակշռելու հա-մար: Նորին վեհապետութիւնը յանձնարա-րում է իր մինիստրներին այս խեղացի նա-խադրուելութիւնը որ է փողի միջոցով ստա-նալ այն որ կապահովէ Անգլիայի զրութիւնը քան թէ իր ժողովուրդի արիւնը թափել և շատ աւելի մեծագումար գանձեր զոհել, որը անտարակոյս հարկաւոր են ռուսները ախա-կան թիւրքիայի հետ մղելու համար:

«Թագուհու այս անվիճելի և խելացի խոր-հուրդը, այն յանձնարարութիւնը որ անում է իր մինիստրներին, հաստատում է թէ նա որչափ խնամքով հսկում է ազգային շահերի վեա և թէ որչափ կարելի է վտաճ լինել Նորին Վեհապետութեան վեա, առանց ձրն-շելու իրա մինիստրների անկախութիւնը: Թէ նա կարող է ազգային քաղաքականութեան առաջնորդել հենց այնպէս լաւ կերպով որ-պէս առաջնորդել է մի քառօր զարէ ի վեր երբ իրա նեցուկ և օգնական ունէր ուղղա-մտութիւնը և քաղաքագիտութիւնը իրա ամուսին իշխանի, որի մահվան համար այն-չափ ցաւում ենք:

«Թագուհու առաջարկած այս քաղաքական գործի մէջ վախի բան չը կայ: Այդ առա-ջարկութիւնը կարժանանայ թէ պարլամեն-տի և թէ ազգի սիրալիր հաւանութեանը:»

ԱՆԳԼՈՒ ԱՍԵՆՏԻ ՄԵՋ ԱՍԿԱՐ ՄԻ ԶԱՌ ԶԱՌԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Նորերում անգլիական պարլամենտի մէջ պարլամենտի անդամ պ. Հարկուրտ մի ծառ խօսեց արեւելեան խնդրի վեա, որից քաղում

ութիւնը 1860-ին: Այդ ձեւ մեղաւոր հրատա-րակած Կ. Պոլսեցի հայերը իւսկիւտարի ճեմա-րանի համար եղած կոիւնների ժամանակից սկսել էին խորհել մի կանոնադրի համար, զանազան ժամանակներ զանազան ձևերի էին վերածել և վերջապէս 1860-ի մայիսի 24-ին Մայրեկեղե-ցում ժողովեցան բազմաթիւ աշխարհականներ և եկեղեցականներ Վարդիս պատրիարքի նախա-գահութիւնով և իրանց մէջ հաստատեցին այդ կանոնները սահմանադրութիւն անուանելով: Յե-տոյ երբ երեսնադէմի պատրիարքի ընտրութեան համար վճեւաւ ազգին մէջ, խաւարեալ կոչ-ված կուսակցութիւնը, հին ամիրայների այդ միացող խմբը, սահմանադրութեան քաղաքա-կան կերպարան տալով մատուցութիւններ արաւ Բ. Գումա որ անմիջապէս դադարեցրեց սահմա-նադրութիւնը և մինչև անգամ կառավարութեան կողմից հրաման կարգացվեալ եկեղեցիներում որ սահմանադրութեան տարեգարծի հանդէսը չը կատարեն (թէ և Կ. Պոլսի հայերը չը լսելով այդ խիստ չրամանին, շարունակեցին իրանց սկսածը) և վերջապէս երբ Ալի-փաշան որ ասել էր թէ ձեւ սահմանադրութեան անիւնները բաւական չեն, հարկաւոր է մի քիչ տաշել և կորակ շինել որ առաջ գնայ, երբ դա երկար ժամանակ յետ չը դարձրեց հայերին իրանց սահմանադրու-թիւնը, 1863 թիւ օգոստոսին Կ. Պոլսի հայերը խմբովին ոտի կանգնեցան և հազարաւոր քաղ-մութեամբ Գումափոխի պատրիարքարանը իջ-

